<<Հաստատում եմ >>

Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային

թիվ 2 պետական քոլեջի տնօրեն

_____ Կ. Հայրապետյան

<<16>> սեպտեմբերի 2022թ

Քննարկվել և հաստատվել է քոլեջի խորհրդի նիստում

/արձանագրություն թիվ 2, <<16>> սեպտեմբերի 2022թ.

խորհրդի նախագահ՝ Ռ.Մնացականյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ <<Ն.ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ 2 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ,ԳՆԱՀԱՏՄԱՆ,ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ,ՊԱՐՏՔԵՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022

ԵՐԵՎԱՆԻ«Ն. ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ 2 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»ՊՈԱԿ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ,ՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ,ԳՆԱՀԱՏՄԱՆ,ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ,ՊԱՐՏՔԵՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Գնահատումն ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման ու բարելավման միջոց է : Գնահատման հիմնական նպատակը ուսանողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի, անձնային որակների ստուգումն ու դրանց հիման վրա ուսումնական գործընթացի բարելավումն է, ուսման որակի վերահսկումը:Գոյություն ունեն գնահատման մի շարք ձևեր՝ գիտելիքների ընթացիկ ստուգում և գնահատում, կիսամյակային (տարեկան) գնահատում և այլն:Գնահատման հիմնական նպատակն է ուսանողի իմացական մակարդակի վերլուծումը, հիմնական սկզբունքներն են՝ արդարությունը, անկողմնակալությունը, հավաստիությունը, հիմնավորվածությունը, հուսալիությունը, մատչելիությունը և թափանցելիությունը:
2. Սույն կանոնակարգը կարգավորվում է ուսանողի գիտելիքի ընթացիկ ստուգման, ընթացիկ և կիսամյակային (տարեկան) քննությունների և տվյալ ժամանակահատվածում ուսանողի կատարած աշխատանքի գնահատման, հմտությունների ձեռքբերման, գործնական խնդիրների լուծման մեջ ստացած գիտելիքների կիրառման կարողության, ինչպես նաև քննությունների արդյունքների բողոքարկման և մոդուլային առարկաների ու քննությունների վերահանձնման գործընթացը:

Քննաձևը

3. Ուսանողների գիտելիքների ընթացիկ ստուգումը անց է կացվում կիսամյակի ընթացքում առարկայի առանձին մասերից, բացահայտում է ուսանողների պատրաստվածության աստիճանը, որն էլ օգնում է պլանավորել ուսուցման հետագա գործընթացը:
4. Ուսանողների ընթացիկ քննությունը և մոդուլի ամփոփումը ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի, դասընթացի որոշակի բաժնի (բաժինների) յուրացման մակարդակի ստուգումն ու գնահատումն է :
5. Կիսամյակային (տարեկան) քննությունը ամբողջական թեմայի, դասընթացի, առարկայի յուրացման աստիճանի ամփոփումն ու գնահատումն է :
6. ՈՒսումնական պլանով սահմանված ստուգարքների ընդունումը կազմակերպվում է կիսամյակի վերջին շաբաթվա ընթացքում՝ կիսամյակի ընթացքում տրված գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման արդյունքների հիման վրա:

Գնահատումը

7. Քոլեջում կիրառվում է միավորային գնահատում, որն ունի ուսանողների կրթական ձեռքբերումների մակարդակը վերահսկող դեր:
8. Գնահատման համար կարող են կիրառվել մի շարք միջոցներ կամ մեթոդներ՝ հարցում,առաջադրանքների կատարում, հարցարան, թեստ:
9. Ստուգարքը հանձնել /չհանձնելու դեպքում ստուգման գրքույկում կատարվում է նշում՝ «ստուգված»/«չստուգված» կամ գնահատվում է:
10. ՈՒսանողը պարտավոր է բոլոր քննությունները և մոդուլները հանձնել ուսումնական պլաններին համապատասխան:Հիվանդության կամ այլ հարգելի պատճառով (հիմնավորված փաստաթղթերով)

սահմանված ժակետում ստուգարքները, քննությունները և մոդուլները չհանձնած ուսանողների համար սահմանվում է ստուգարքների, քննությունների և մոդուլների հանձնման անհատական ժամանակացույց:

11. Քննաշրջանում քննության չներկայանալը քննական տեղեկագրում նշվում է «չի ներկայացել» բառերով:

12. Տվյալ կուրսի ուսումնական պլանով նախատեսված տեսական, լաբորատոր-գործնական առաջադրանքները և ուսումնաարտադրական պրակտիկաները, բոլոր քննությունները, մոդուլներն ու ստուգարքները հաջող հանձնած ուսանողները, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի ներկայացմամբ և տնօրենի հրամանով փոխադրվում են հաջորդ կուրս, իսկ ավարտական կուրսերի ուսանողները իրավունք են ստանում մասնակցելու պետական որակավորման քննություններին:

13. Քննությունների, ստուգարքների և մոդուլների ամփոփման արդյունքներով մինչև երկու առարկայից «անբավարար» ստացած ուսանողներին տրվում է պայմանական փոխադրում՝ սահմանելով լուծարման շրջան՝ 2 շաբաթ:

14. Կիսամյակի ուսումնական ծրագրերը չկատարած ուսանողները, քննաշրջանում երեք տարբեր առարկաներից «անբավարար» ստացած, ինչպես նաև լուծարման շրջանում երեք անգամ «չստուգված» կամ «անբավարար» ստացած և սահմանված ժամկետներում առարկայական պարտքերը չմարած կամ ուսման վարձը չվճարած ուսանողները ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի ներկայացմամբ և տնօրենի հրամանով հեռացվում են ուսումնական հաստատությունից:

Պարտքերի մարումը, բողոքարկումը և քննությունների վերահանձնումը

15. Կիսամյակի ընթացքում առավելագույնը երկու ստուգարքից անբավարար գնահատական ունեցող ուսանողը հնարավորություն ունի մինչև քննաշրջանը, հանձնել <<բաց դռների>> օրը և մասնակցել քննություններին:

Առաջին կուրսերում քննություններից առաջ քննական առարկաներից <<անբավարար>> ստացած և պարտք ունեցող ուսանողը պետք է մինչև տվյալ առարկայի քննության նախորդ օրը հանձնի ստուգարքը և ապա մասնակցի քննությանը: Հակառակ դեպքում ուսանողը առարկայական և քննական մինչև երեք <<պարտք>>երը հանձնում է ըստ սահմանված կարգի՝ լուծարման շրջանում:

16. Երկրորդ և բարձր կուրսերում փուլային ամփոփումների ժամանակ՝ 72 ժամ և ավել (144/2) բացակայություն ունեցող ուսանողներին տալ նկատողություն (գրավոր) և մինչև երկրորդ փուլի սկսելը կամ ուսումնական պրակտիկայի սկսելը թույլատրել սահմանված ժամկետներում ամփոփել մոդուլները:

17. Քննաշրջանի կամ մոդուլների ամփոփման ընթացքում միայն մեկ քննական առարկայից պարտք ունեցող ուսանողը իրավունք ունի այն վերահանձնել «բաց դռների» օրը, որը հաջորդում է քննաշրջանին և տևում 2/երկու/ շաբաթ: Մոդուլի երկու կիսամյակների տարբեր միավորների դեպքում՝ վերջնական գնահատականը որոշվում է երկու կիսամյակների միջին թվաբանականով:

18. ՈՒսանողը իրավունք ունի կիսամյակային քննությունների կամ մոդուլների ամփոփման գնահատումներով ողջ ուսումնառության ընթացքում առավելագույնը երեք առարկաներից ստացած «բավարար» և «լավ» գնահատականները վերահանձնել ավարտական կուրսի առաջին կիսամյակի ամփոփումից հետո: Վերահանձնված միավորը կամ գնահատականը չի կարող ազդել ռոտացիոն միավորի վրա:

Երկու կիսամյակների տարբեր միավորների դեպքում՝ վերջնական գնահատականը որոշվում է երկու կիսամյակների միջին թվաբանականով:

19. Ուսանողները վերահանձման համար իրենց դիմումները ներկայացնում են Քոլեջի տնօրենին, որն էլ, անհրաժեշտության դեպքում, հանձնարարում է Քոլեջի ուսումնական գծով փոխտնօրենին:

20. Տնօրենի կողմից վերահանձնման վերաբերյալ դրական որոշում կայացնելու պարագայում ուսանողը կարող է դիմել և մասնակցել վերահանձնմանը:

21.Գնահատականների փոփոխության դեպքում վերահանձնման համար տրված ուղեգիրը՝ դասախոսի ստորագրությամբ և նոր նշանակված գնահատականով կցվում է տվյալ կուրսի ամփոփագրին և քննական տեղեկագրին,համապատասխան նշում է կատարվում ուսանողի ստուգման գրքույկում:
22.Ուսանողը կարող է բողոքարկել գիտելիքի գնահատման արդյունքները, քննություններց (ստուգարքներից) ստացած գնահատականները:Կիսամյակային քննությունների արդյունքները, ինչպես նաև պարտքերի լուծարման և «բաց դռների» ժամանակահատվածում քննություններից (ստուգարքներից) ստացած անբավարար գնահատականը, ուսանողի գրավոր դիմումի համաձայն քննարկվում է Քոլեջի ներքին որակի ապահովման ենթակառուցվածքում՝ (այսուհետ՝ ենթակառուցվածք) գնահատականների հրապարակումից հետո երեք աշխատանքային օրերի ընթացքում:
23.Անհրաժեշտության դեպքում ենթակառուցվածքի անդամները կարող են դիմել և բողոքարկմանը մասնակից դարձնել Քոլեջի համապատասխան ամբիոնների մասնագետներին՝ բացառությամբ բողոքարկվող գնահատականը նշանակած մասնագետի:
24.Եթե ուսանողը բողոքարկում է գրավոր հանձնած քննությունը, ապա ենթակառուցվածքը ստուգում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման համապատասխանությունը սահմանված չափանիշներին:
25.Բանավոր քննության բողոքարկման պարագայում ենթակառուցվածքը ուսանողի գիտելիքը ստուգում է այն մասով, որն ուսանողը բողոքարկում է:
26.Բողոքարկման արդյունքում ենթակառուցվածքը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.

●քննական գնահատականը (ստուգարքի արդյունքը) մնում է անփոփոխ

● քննական գնահատականը (ստուգարքի արդյունքը) փոխվում է (գնահատականը բարձրացվում է կամ իջեցվում):